ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՇԻՐԱԿԻ ՄԱՐԶՊԵՏ

ՈՐՈՇՈՒՄ

«16» սեպտեմբերի 2016 թվական N:343-Ա քաղաք Գյումրի

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՇԻՐԱԿԻ ՄԱՐԶՈՒՄ ՑՈՒՑԱԴՐԱԿԱՆ ՀԱՏՈՒԿ ՏԱԿՏԻԿԱԿԱՆ ՈՒՍՈՒՄՆԱՎԱՐԺՈՒԹՅՈՒՆ ԱՆՑԿԱՑՆԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով Հայաստանի Հանրապետության Նախագահի 1997 թվականի մայիսի 6-ի «Հայաստանի Հանրապետության մարզերում պետական կառավարման մասին» ՆՀ-728 հրամանագրի 1.6-րդ, 1.22-րդ, 1.23-րդ կետերի, Հայաստանի Հանրապետության կառավարության 2015 թվականի հունվարի 22-ի N 46-Ն որոշմամբ սահմանված «Արտակարգ իրավիճակներում բնակչության պաշտպանության և քաղաքացիական պաշտպանության ոլորտներում Հայաստանի Հանրապետության պետական կառավարման և տեղական ինքնակառավարման մարմինների ու կազմակերպությունների պատրաստման և տվյալ ոլորտների հիմնահարցերով բնակչության ուսուցման» կարգի 6-րդ կետի 5-րդ ենթակետի, 18-րդ կետի դրույթներով, համաձայն Հայաստանի Հանրապետության Շիրակի մարզի բնակչության պաշտպանության համակարգի նախապատրաստման 2016 թվականի հիմնական միջոցառումների պլանի՝

ՈՐՈՇՈՒՄ ԵՄ

1. 2016 թվականի հոկտեմբերի 18-ին Հայաստանի Հանրապետության արտակարգ իրավիճակների նախարարության աշխատակազմի փրկարար ծառայության Շիրակի մարզային փրկարարական վարչության Ախուրյանի թիվ 53 հրշեջ-փրկարարական ջոկատի տարածքում գտնվող ուսումնական վարժահրապարակում անցկացնել ցուցադրական հատուկ

տակտիկական ուսումնավարժություն՝ «Փրկարարական աշխատանքների իրականացումը փլուզված շինությունում» թեմայով:

2. Ուսումնավարժության ղեկավար նշանակել Հայաստանի Հանրապետության Շիրակի մարզպետի տեղակալ Սեյրան Պետրոսյանին, ուսումնավարժության ղեկավարման շտաբի պետ՝ Հայաստանի Հանրապետության արտակարգ իրավիճակների նախարարության աշխատակազմի փրկարար ծառայության Շիրակի մարզային փրկարարական վարչության պետ՝ Արթուր Կարապետյանին:

3. Ուսումնավարժությունում ընդգրկել.

1) Հայաստանի Հանրապետության արտակարգ իրավիճակների նախարարության աշխատակազմի փրկարար ծառայության Շիրակի մարզային փրկարարական վարչությունը, Գյումրու թիվ 48 և Ախուրյանի թիվ 53 հրշեջ-փրկարարական ջոկատները.

2) Հայաստանի Հանրապետության Շիրակի մարզպետարանի աշխատակազմի առողջապահության և սոցիալական ապահովության վարչությունը.

3) Հայաստանի Հանրապետության կառավարությանն առընթեր Հայաստանի Հանրապետության ոստիկանության Շիրակի մարզային վարչությունը.

4) «Հայաստանի էլեկտրական ցանցեր» փակ բաժնետիրական ընկերության «Ղարս» մասնաճյուղը.

5) «Գազպրոմ Արմենիա» փակ բաժնետիրական ընկերության Շիրակի գազիֆիկացման և գազամատակարարման մասնաճյուղը.

6) Հայաստանի Հանրապետության Շիրակի մարզի Ախուրյանի համայնքապետարանի ղեկավար կազմը:

4. Հանձնարարել.

1) ուսումնավարժության ղեկավարման շտաբի պետին՝

ա. մինչև 2016 թվականի հոկտեմբերի 7-ը ուսումնավարժության ղեկավարի հաստատմանը ներկայացնել ուսումնավարժության անցկացման փաստաթղթերի փաթեթը,

բ. կազմակերպել մասնակիցների նախապատրաստումը՝ համաձայն ցուցադրական հատուկ տակտիկական ուսումնավարժության նախապատրաստման օրացուցային պլանի,

գ. մինչև 2016 թվականի հոկտեմբերի 17-ը զեկուցել ուսումնավարժությանը պատրաստ լինելու մասին.

2) ուսումնավարժության մասնակիցներին՝

պատրաստ վիճակի բերել ուժերն ու միջոցները, համալրել ստորաբաժանումները հաշվեցուցակային գույքով, սարքավորումներով և տեխնիկայով, ուսումնավարժության ընթացքում ապահովել անվտանգության կանոնների պահանջների կատարումը.

3) Հայաստանի Հանրապետության Շիրակի մարզպետարանի աշխատակազմի տեղեկատվության և հասարակայնության հետ կապերի բաժնի պետին՝

ապահովել ուսումնավարժության լուսաբանումը:

5. Սույն որոշման կատարման հսկողությունն իրականացնում եմ անձամբ:

Հ. ՍԻՄՈՆՅԱՆ

Իսկականի հետ ճիշտ է